(Չի գործում 2011 թվականի ապրիլի 18-ից)

Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
29/12/2010թ թիվ 48-Լ որոշմամբ

Ուժը կորցրել է 25/03/2011թ թիվ 38-Լ որոշմամբ
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Անդրանիկ Նորեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«30» դեկտեմբերի 2010 թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-019

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 2010

1. ԱՊՊԱ ոլորտում կրկնակի փորձաքննության իրականացման համար տուժողը (նրա իրավահաջորդը), ապահովադիրը, ապահովագրված անձը կամ ապահովագրական ընկերությունը «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ կրկնակի փորձաքննություն իրականացնելու մասին,

2) բողոքարկվող փորձաքննության եզրակացության (հաշվետվության) պատճենը:

2. Բյուրոն կրկնակի փորձաքննության իրականացման պահանջ ներկայացրած անձից կարող է պահանջել կրկնակի փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և տեղեկություններ:

3. Կրկնակի փորձաքննության իրականացման համար պահանջ ներկայացնող անձը դրա համար վճարումը կատարում է կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ հետևյալ կերպ.

1) Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության նախահաշիվը ներկայացվելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում վճարում է նախահաշվի համաձայն որոշված փորձաքննության գինը: Ընդ որում, տուժողի (նրա իրավահաջորդի), ապահովադրի, ապահովագրված անձի կամ ապահովագրական ընկերության՝ կրկնակի փորձաքննություն ներկայացնելու պահանջը համարվում է տրված սույն ենթակետով նախատեսված գումարի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը Բյուրոյին ներկայացվելու պահին.

2) կրկնակի փորձաքննության ավարտից հետո կատարվում է փոխհաշվարկ Բյուրոյի և կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացրած անձի միջև. եթե նախահաշվի հիման վրա վճարված գումարը գերազանցում է Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարը, ապա Բյուրոն կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացրած անձին վերադարձնում է այդ տարբերության չափով գումարը, իսկ եթե նախահաշվի հիման վրա վճարված գումարը պակաս է Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարից, ապա կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացրած անձի կողմից համապատասխան տարբերության չափով փոխհատուցվում են Բյուրոյի կողմից կատարված ծախսերը:

Չի գրանցվել